



2018թ. դեկտեմբերի 2-ից Էրեբունի ամրոցի, այսպես կոչված, Կարասային սրահում պեղումներ է իրականացնում Էրեբունու հնագիտական արշավախումբը: Արշավախմբի ղեկավարը «Էրեբունի» պատմահնագիտական-արգելոց թանգարանի «Կարմիր բլուր» մասնաճյուղի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Միքայել Բադալյանն է: Պեղումները կենտրոնացվել են Կարասային սրահի կենտրոնական հատվածում: Նախորդ տարի այստեղ ֆիքսվել էր պատ և պիլլոններ, որոնք կարծես թե չեն ընդկզրկվել Էրեբունի ամրոցի խորհրդային ժամանակաշրջանի հատակագծերում: Պեղումները ցույց են տալիս, որ տարածքը մեծապես խաթարվել և վնասվել է խորհրդային ժամանակաշրջանում արված աշխատանքների ժամանակ: Չնայած այս հանգամանքին՝ մեկ անգամ ևս հաստատվեց արշավախմբի այն ենթադրությունը, որ Կարասային սրահի հարավային հատվածի կենտրոնում եղել են պատ և պիլլոններ:

Հայտնաբերվել է մեկ այլ խաթարված պատի հետք, որը միանում է Կարասային սրահի կենտրոնական և արևմտյան պատերին: Ըստ երևույթին, այս տարածքում կարասները տեղադրվել են ուշ փուլում՝ հավանաբար ուշուրարտական կամ հետուրարտական ժամանակաշրջաններում: Չնայած այն հանգամանքին, որ պեղումներն արվում են փոքր ծավալով, այնուամենայնիվ դրանց գրանցած արդյունքները խիստ կարևոր նշանակություն ունեն և մեծապես փոխում են մեր պատկերացումները Կարասային սրահի մասին՝ մեկ անգամ ևս փաստելով, որ խորհրդային ժամանակաշրջանում Էրեբունի ամրոցին վերաբերող բազմաթիվ մեկնաբանություններ և հատակագծեր կարիք ունեն վերանայման: